# ԼՐՈՑ ԳԻՐ
# ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1840 — ՅՈՒԼԻՍԻ 1 — ՈՐ Է 1256 — ՃԻՄԱԶԻԼ ԱՄԱԼԻ 14

ՆՈՒՄԵՐԱ 11

## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Մեծափառ Թագաւորին իր քրոջը Ադիլէ Սուլտանին հարսնացընելու կամեցողութիւնը՝ անկէց յառաջ տաճկաց 190 լրոյ գրին մէջը գրուած էր . ուստի անցեալ րէպիւլ ախըրի քսան և հինգ օրը՝ նոյն սուլտանին նիքեահը կըտրըվելուն համար՝ շէրիին հարկաւորութեամբը երկու կողմին վէքիլները և վկաները ներկայ գըտնըվելով, հրամանաւ Թագաւորին խըրգայի շէրիֆի օտան ժողովվեցան։ Եւ բարենշան ժամանակը ըստ պահանջման օրինաց՝ երկու կողմի վէքիլներուն միջնորդութեամբը նիքեահը և աղըրլըխը և այլ ինչ հարկաւորեալ գործոց կատարումը տըրվեցաւ։

Եւ այժմեան Թիճարէթի նազըրը՝ փեսայացու Ահմէտ Ֆէթհի փաշային կողմանէ սուլտանին խըրկըվելու ծանրագին մուճէվհէրներով զարդարեալ նըշանի դախըմը՝ մեծ հանդիսով տիվան էօլիյէն Այասօֆեայի ճատտէյէն՝ սրբունի սէրայը խըրկըվեցաւ . և Թեշրիֆաթի տէֆթէրը գրուած կերպովը Տարիւսսաատէ աղասիյին տըրվելով, սրբունի հարէմը յանձնըրվեցաւ։

Եւ սովորական նըշան եաղլըղին պօղչան ալ՝ հարսնացու սուլտանին պաշ աղային ձեռամբը՝ Ահմէտ Ֆէթհի փաշային խըրկըվեցաւ . և նոյն փաշային կողմանէ ալ անոր փոխարէն Թէրթիպ եղած պօղչան՝ նոյն պաշ աղային յանձնըրվելով սուլտանին տըրվեցաւ։

Տէր բարձրեալն ած՝ Ինքնակալին մերոյ՝ կերպ կերպ ուրախութիւն շնորհելով՝ երկարութիւն կենաց պարգևեսցէ, ամէն։

Երևելի ուլէմաներէն՝ և մէճլիսի ահքեամի ատլիյէի ազաներէն՝ վէգայի գրող Եսատ էֆէնտին, և զարպխանէի նազըրը՝ Ջիվէր էֆէնտին, և տիվանի հիւմայունի ամէտճի՝ Մահիր պէյ էֆէնտին, և ուրիշ գիտնական մարդիկ, նորոգ ծնեալ Մէվհիպէ սուլտանին վըայովը Թարիխներ շիներ են . և այն շինած Թարիխները՝ Արքային մատուցեր են։

Եւ Թագաւորն ալ՝ իր քաղցր և գթած բարուցը իսթիղայէն՝ Եսատ էֆէնտիին բաւական պարգև, և յիշեալ նազըրին՝ և Մահիր պէյ էֆէնտիին ծանրագին մուճէվհէրլի խուդիներ, և ուրիշ Թարիխ շինող մարդկանց ալ՝ բաւական պարգև շնորհեր է։

Ի վաղուց հետէ սովորութիւն էր՝ որ Արքայի զաւակ ծնած ժամանակը իր քաղաքներուն բնակիչները ուրախութեան մասնակից ընելու մտօք՝ Անատօլու և Րումէլի և ուրիշ տեղերը հրամանագըրեր խըրկէր։

Ուստի այժմ ևս բարեհաճութեամբն Արքային՝ այս մեծ աւետիսովը բոլոր բնակիչները ուրախացընելու՝ և իւր կենացը բարեմաղթութիւն առնել տալու համար հրամանագըրեր գըրվելով, յիշեալ տեղերուն Թաթարներուն ձեռամբը խըրկըվեցաւ։ Եւ Թանզիմաթի խայրիյէին իսթիղայէն՝ աղքատաց ծանրութիւն չըլլալու համար՝ այն Թաթարներուն ճամբու խարճն ալ՝ սրբունի գանձարանէն տըրվեցաւ։

Ենկիւրիի միւշիր Տավուտ փաշան՝ Թանզիմաթի խայրիյէին վերաբերեալ գործոց մէջը Թուլութիւն ընելը, և նոյն սանճախին բնակիչներուն իրմէ ըրած գանգատանացը նայելով՝ աղէկ կառավարութիւն չը գիտնալը յայտնըրվեցաւ . ապա հրամանաւ Թագաւորին՝ Տիյարպէքիրի միւշիր Սատուլլահ փաշան՝ Ենկիւրիի միւշիր ընտրըվեցաւ։

Ուստի Սատուլլահ փաշան մինչև իր տեղէն՝ Ենկիւրի գալու ժամանելու ըլլայ նէ, այն տեղի գործքը վէքիլութեամբ կառավարըվելուն համար՝ այժմեան Խայսէրիի ֆէրիգ Օսման փաշային յանձնըրվեցաւ։ Եւ Մարաշի ֆէրիգ՝ Սիւլէյման փաշան աղէկ կառավարութիւն գիտնալուն համար, միւշիրութեան մեծ աստիճանաւ Տիյարպէքիր այալէթին միւշիր դըրվեցաւ։

Եւ մէճլիսի ահքեամի ատլիյէի ազաներէն՝ Վահիդ էֆէնտին խոհեմ և գործունեայ անձ մը ըլլալով՝ անկէց յառաջ Տիյարպէքիրի միւշիրութենէ ներքև եղած տեղերուն պաշտօնատարութի ընե-

լուն համար, հիմա այն տեղն ումուրի մալիյէի գործքը՝ արքունի հրամանաւ անոր յանձնըվեցաւ:

Նոյն Տէյարպէքիրի կողմերը գտնըվող՝ Թէ ասքերի խասային և Թէ արքայական ուրիշ կըԹեալ զօրաց մէմուրիյէթին ժամանակը խիստ երկարած է. ուստի բարեխնամ Արքային հովանաւորութեամբը հանգիստ ըլլալնուն համար՝ նոյն զօրացը մէջէն շատ երկար կեցողներուն կէսին չափը արքայանիստ քաղաքը բերվելուն, և էնկիւրիի նախկին միւշիր՝ Տավուս փաշան ալ հիմակու հիմա Պուրսա կենալուն՝ Ինքնակալը հրաման ըրաւ:

Մալիյէի նազըր Սաիպ փաշային՝ որ այս անգամ վէզիրութեան և միւշիրութեան աստիճանը Ինքնակալէն շնորհվելով, Թագաւորական պէրաթըն ալ արքունի մապէյնէն իրեն խըրկըվեցաւ:

Նոյն մալիյէի խազնէին մէմուրները և ուրիշ քեաթիպները և խալէմին գլխաւորները յարմար տեղ մը կանգնելով, նոյն պէրաթը դիմաւորելէն յետոյ՝ մեծաւ յարգանօք կարդացվեցաւ. և բոլորին կողմանէ ալ՝ Արքային կենացը երկարութեանը համար պարտք եղած աղօթքը կատարվեցաւ:

Մալիյէի նազըրութեան մեծ պաշտօնը փաշայութեան և միւշիրութեան իւնվանով՝ Ինքնակալէն Սաիպ փաշային շնորհված է. և այս նազըրութեան գործը շատնալով, պատասխան բաները լաւ կարգադրըվելը պէտք եղաւ:

Այս ուրիշ երևելի միւշիրներուն քովը միւսթէշարութեան պաշտօնով մէկ մէկ անձ դընըվելուն համար, յիշեալ փաշային անցեալները միւավին դըրվող՝ Իսմայիլ էֆէնտին խոհեմ և արժանաւոր անձ մը ըլլալով, արքայական հրամանաւ՝ մալիյէի նազըրին միւսթէշար դըրվեցաւ:

Անատօլուի խազէպքէր եասըղզատէ Իզզէթ էֆէնտիին՝ Արքայէն Րումէլիի խազէպքէրութեան աստիճանը շնորհվեցաւ, և իր քովը գտնըված Անատօլուի աստիճանին նշանը Զարըփանէին յանձնըվելով՝ Րումէլիի աստիճանին յատկացեալ նշանը տըրվելուն Թագաւորական հրաման եղաւ:

Երևելի իւլէմաներէն արապզատէ Համտուլլահ էֆէնտիին որդին՝ մէվլաներէն Ամիր էֆէնտիին, և միւնէճճիմ պաշի Հիւսնի էֆէնտիին՝ Ինքնակալէն մէքքէի աստիճան շնորհված ըլլալով, նոյն աստիճանին յատկացեալ երկու հատ նշանն ալ տըրվելուն համար՝ Շէյխիլամ էֆէնտիին կողմանէ իմացումն եղեր է. և Արքային հրամանաւը նոյն նշաններուն շինվիլը՝ Զարըփանէին յանձնըվեցաւ:

Թանզիմաթի խայրիյէին վերաբերեալ պաշի հարկաւոր բաները հարցուփորձ ընելու համար՝ Իւսքիւպ նազըրի Հըֆզը փաշան, և Խալըանատէլէնի հրամայող Ապտիւլ րահման փաշան, և Իվրանեացի Հիւսէյին փաշան, արքայանիստ քաղաքը բերվեր են:

Նոյն Թանզիմաթի խայրիյէին վերաբերեալ գործքերը այն կողմերն ալ գործի դըրվելուն վրայովը հարկաւոր հարցմունքները ըլլալէն յետոյ՝ յիշեալ անձանց այս կողմը մնալու գործքերնին չէ մնացեր. և ժամ մը յառաջ պաշտօնատարութեան տեղերնին դըտնըվիլը հարկաւոր ըլլալով, իրենց տեղը երԹալու Արքայէն հրաման եղաւ:

Բայց ասոնք մեծի տէրութեանը հաւատարիմ ծառայներէն գտնըվելով, իրենց փառք և պարծանք մը ըլլալուն համար՝ գացած ժամանակնին Ինքնակալին հրամանաւը իր դէմը ներկայացեր են. և մէկ մէկ հատ ծանրագին միւձէվհէրլի խուդիներ շնորհվելով, ուրախութեամբ իրենց պաշտօնատարութեան տեղը դարձեր են:

Վերոգրեալ Ապտիւլ րահման փաշան այս կողմը պատահած իր գործքերը տեսնըվելուն և կարգի դըրվելուն համար՝ իրեն խափու քէթխիւտասի մը Թայըն ըլլըվելը խընդիրք ըրեր է: Նոյն ինքն ալ՝ երևելի նախարարներուն խափու քէթխիւտաներէն՝ մեռնող Նաշիտ պէյզատէ Միւխթար պէյին հետ յառաջմանէ պէրի ծանօթութիւն ունենալուն համար, Արքային հրամանաւը՝ Միւխթար պէյը իրեն խափու քէթխիւտասի դըրվեցաւ:

Մեծի տէրութեանը կողմանէ Պէրլին մայրաքաղաքը գործակալութեամբ գնացող ամէտի գըլխաւորներէն Նուրի էֆէնտիին՝ անկէց յառաջ արքայանիստ քաղաքը դառնալու հրաման եղած էր. բայց ճանապարհին մեռնելով, անոր տեղը Սատըազամին որդին Օսման պէյը, որ իր մէքթիւպճիներուն գլխաւորներէն և առաջին սընըֆէն խոհեմ և յառաջադէմ ըլլալուն համար՝ ամէտի օտան առնըվեցաւ:

Նոյն առաջին սընըֆը ունեցող Օսման պէյին տեղն ալ՝ երկրորդ սընըֆի գլխաւորներէն իր եղբայրը Իպրահիմ պէյը դըրվեցաւ: Նոյն մեռնող Հիւսնի պէյին տըղին՝ երրորդ սընըֆը ունեցող Հաճի Ապտի պէյ էֆէնտիին ալ՝ Իպրահիմ պէյին ունեցած երկրորդ սընըֆի գլխաւորութիւնը յանձնըվեցաւ:

Նոյն անցեալները ամէտի օտան մէմուր եղող և առաջին սընըֆը ունեցող՝ Ադըֆ պէյ էֆէնտիին տեղն ալ՝ երկրորդ սընըֆի գլխաւորներէն Օսման պէյ էֆէնտիին դըրվիլը, և երրորդ սընըֆի դախըլէն Սաիտ էֆէնտիին ալ՝ Օսման պէյին երկրորդ սընըֆին տեղը առնըվիլը յարմար տեսնըվելով, ասոնց պաշտօնատարութիւնը Արքային հրամանաւը գործի դըրվեցաւ:

Ատըրնէի նախկին միւշիր Նաֆիզ փաշայէն ամբաստանութիւն (այսինքն շիքեայէթ) ըլլալուն համար, այն տեղին մուհասըպը Նաճէմ էֆէնտին՝ և վի-

ճուհներէն և ուրիշ ազգաց գլխաւորներէն պէտք եղածները արքայանիստ քաղաքը բերուելով, ժողովին մէջը երկար բարակ քննութիւն եղաւ. և եղած գանգատանաց բաներուն գրուած մազպատաներուն խուլասէն՝ ժողովին մէջը ամենուն ներկայութեանը կարդացուեցաւ:

Նաև ապա նոյն տեղի ազաներուն զատ զատ հարցուեցաւ՝ թէ Նաֆիզ փաշան յանցաւոր է մի, չէ մի. և ամէնքն ալ միաբերան պատասխանեցին թէ՝ ահա իր անկարգութիւնները խուլասէէն իմացուեցաւ, և դատաստանի մէջ ալ յայտնի եղաւ. ապա անտարակոյս (ըր շիւպհէսիզ) յանցաւոր է:

Նաև յանցանքը հաստատուելէն յետոյ՝ հիմա անոր ինչ պատիժ տալ պէտք է տէյի ժողովին նորէն հարցուեցաւ: Ուստի ոմանք վճռեցին թէ միւշիրութեան աստիճանէն հանելով, այսուհետև ալ մեծի տէրութեանը գործքերուն մէջը մտնալու չը կարողանալով, երեք տարի աքսորուի: Նաև ոմանք ալ այսպէս վճռեցին՝ որ միայն առէթա վեզիրութիւնը վրայէն առնուի, և այնպէս երկու տարի աքսորուի:

Բայց առաջին կերպը վճռողները ժողովին մեծմասը գտնուելնուն համար՝ անոնց վճռոյն հաւանութիւն տրուեցաւ: Նաև ինչպէս որ յիշեցինք այսուհետև ամենևին տէրութեան գործքերու մէջը չը գործածուելու վճռով՝ վեզիրութիւնը վրայէն վերցուած այնպէս երեք տարի Քէօթահեայի մէջ աքսորուած մնալը յարմար սեպուեցաւ:

Նաև Նաֆիզ փաշային՝ Խարբերդի քաղաքին սենտուկէն անիրաւ տեղը առած ըստակները կենէ տէրին տեղը ետ տրուիլը, և պարզի միւլթէզիմներին զամիմէ և գրուշմիյէ անունով առած աւելորդ ըստակները մալիյէի խազնէին թէսլիմ ըլլալը պատշաճ համարուեցաւ:

Նաև մուհասսըլ Էսհէմ էֆէնտիին ալ՝ Խարբերդի պէս մեծ քաղաքը խարջէ ընելու բաւական խոհեմութիւն չունենալուն համար, անոր տեղը մէկ ուրիշ յարմար անձ մը դրուիլը հարկաւորեցաւ:

Ուստի Չօրլուի և անոր վերաբերեալ քաղաքներուն մուհասսըլ խօճէկեան Շաքիր պէյը արժանաւոր ըլլալուն, և Խարբերդ ալ Չօրլուի մօտ գտնուելուն համար՝ Խարբերդի մուհասսըլութիւնն ալ անոր տրուեցաւ, և յատուկ ապրուստ ալ կապուեցաւ:

Նաև Խարբերդի մէտրէփօլիտը իր ազգը կառավարելու կարող չըլլալուն, և մանաւանդ այս բաներուն վրայ անտեղի մահզարներ խրկելուն համար՝ անոր ալ փոխուիլը հարկ եղաւ. և հոն տեղը անկարգութիւն ըրող՝ Նոյատնի չօրպաճիին հիսապը տեսնուիլը Խարբերդի մէճլիսին յանձնուեցաւ:

Նաև Խարբերդի վէճուհները և խօճա պաշիները ասկէ ասդին թանզիմաթի խայրիյէին ամենևին հակառակ գործք չը գործելնին, և այս շնորհը ճանաչելով անկարգութենէ հեռի մնալնին՝ մէճլիսի ահքեամի աալիյէին կողմանէ թէնպիհ ըլլալով, իրենց տեղը խրկուեցան:

Ուստի բոլոր պատշաճ տեսնուած նախայիշեալ բաները 'ի գործ դրուելուն՝ մէճլիսին կողմանէ Արքայէն հրաման խնդրուեր է. և վեհափառ թագաւորն ալ ինչպէս որ պատշաճ տեսնուեր է, այնպէս գործի դրուելուն հրաման տրուած է: Նաև Նաֆիզ փաշային ալ անունը 'ի հարկէ այսուհետև

Նաֆիզ էֆէնտի պիտի կոչուի:

Նաֆիզ փաշային յանցանացը խուլասէին օրինակն է:

Մերուիշեալ մուրաֆայի մազպատաներուն խուլասէէն իմացուածին կէօրէ՝ Նաֆիզ փաշան՝ Խարբերդի մուհասսըլ Էսհէմ էֆէնտիին կերպ կերպ անարգութիւններ ընելով, և անիկայ բանի տեղ չը սեպելով, Խարբերդի վէճուհներուն և մուհասսըլին մէջ տեղը պաղութիւն և խռովութիւն ձգելու հետևեր է.

Նաև ինքը այս անգամ հաստատուած նիզամնամէին միտքը չը հասկցող մարդ մը չէ իքէն՝ Խարբերդի մէճլիսին մէջ թէրթիպ ըլլալու ազաները նիզամնամէին համեմատ և պահանջմանը կէօրէ թէրթիպ չընելը յայտնի եղեր է:

Նաև Խարբերդի վէճուհներէն՝ Էմրուլլահ աղան ինչպէս որ մուրաֆային ատէնը Նաֆիզ փաշային երեսին խօսեցաւ, և անիկայ ալ ինքեար չը կրցաւ ընել, թէ թանզիմաթի խայրիյէէն յառաջ նոյն աղային հետ խիստ աղէկ ըլլալով, և Խարբերդի պատէթին գլուսմիյէ և ուրիշ պահանջմունքները անոր ձեռամբը ժողվելով, մինչև իրեն վօյվօտայութիւն տրուած էր. և մանաւանդ թանզիմաթի խայրիյէին վերաբերեալ պարզի գործքերը այս կողմը հարձուփոխի համար՝ երբոր Խարբերդէն միւթէպէր վէճուհ մը խնդրուեցաւ, Նաֆիզ փաշան՝ ահա այս Էմրուլլահ աղան ահալիին փէք հաւնած և միւթէպէր վէճուհ նէ ըսելով, և ձեռքն ալ թավսիյէի թուղթ տալով՝ արքայանիստ քաղաքը խրկած էր:

Բայց թանզիմաթի խայրիյէն հաստատուիլը՝ իրեն գլխաւորութեանը արգելք գալով, երբոր իրեն միտքը դրած շահին և օգուտին չը հասնելը իմացաւ նէ, Էմրուլլահ աղայէն երես դարձընելով, հիմա ալ անոր համար միւզէվիր և անիրաւ մարդ է ըսելով նէֆսանիյէթ ընելը կերևի:

Նաև Խարբերդի մէջ բնակող տաճիկներուն և րայեաներուն մէջը բոլորովին ապահովութիւն ըլլալով, էմնիյէթսիզութեան ամենևին մէկ նշան մը չը կայ իքէն՝ մէկ փոքր չօճուխի մը խօսքի հաւատալով, և շփոթութիւն ցոյց տալով, նախ գործքը թահքիք չըրած՝ պարզի անյարմար գործք գործելու հետևեր է:

Նաև այսու ամենայնիւ ես չօճուխին խօսքին չը հաւատացի ըսելով, մուհասսըլ էֆէնտիին կէս գիշերուն խապար խրկելով՝ փաշային դուռը կանչեր է: Նաև Խարբերդի մէջ ֆէսատ պիտի ըլլայ ըսելով, Ֆիլիպէի Ֆերիդ Խայրէտտին փաշային կողմը թաթար հանելով, պարապ տեղը աղմուկ և շփոթութիւն ձգելը յայտնուեր է:

Նաև հետևեալ օրը րայեայի խօճա պաշիները էմնիյէթ հասըլ ընելու համար Նաֆիզ փաշային քովը գացածնուն պէս՝ զանոնք թէքտիր ըրեր է. և նոյն տեղի ազաները և բնակիչ տաճիկները րաեայէն էմնիյէթ չունելին ըսելով, և ահա ասոր նը-

մամն անկարգ խօսքեր խօսելով, ռաեաներուն մէջ երկիւղ ձգեր է։

Եւ նախայիշեալ Նայտանի չօրպաճին անկարգ մարդ մը ըլլալն՝ զանիկա ընդուներ է։ Եւ ընդհակառակն՝ շատ ժամանակէ պէրի կառավարութեան գործոց մէջը գործածված Էյուպ աղան օրդալըխի եղած խօսք խօրադան խաղաղցընելու Թային ըլլալը՝ աչալին և ռաեաներուն կողմանէ աղաչանք եղեր է անոր, զանիկա չէ ընդուներ։

Վերջապէս բարեխնամ Արքային հովանաւորութեը նորոգ հաստատված թանզիմաթի խայրըյէին՝ Նաֆիզ փաշան բոլորովին հակառակը շարժելով, և տէրութեան օգտին թշնամի ըլլալով՝ իր անձնական օգուտը ամենէն վեր բռներ է։ Եւ այս կերպով անկարգ գործոց հետեւելով, թանզիմաթի խայրըյէին վնաս և սէքթէ տալը կամեցեր է։

Եւ ած մի՛ արասցէ՝ իր հօր միտքը և դիտաւորութիւնը յառաջ տանիլ կամելով, անոր այս գործքերը մէկ խառվութի և ֆէսատ մը հանելու պատճառ ըլլալէն ՚ի զատ, շատ միւլթէզիմ և աղահ մարդ մը ըլլալով, Թէվզի տէֆթէրին մէջը կերպ կերպ անուններով պահանջմունքներ խօթեր է։ Եւ մանաւանդ մեր ամենեցուն բարերար՝ Մեռնող Թագաւորին հախին անվայելուչ խօսքեր խօսելով, ապերախտութիւն ցոյց տուեր է։

Եւ ներկայ վիճակին նայելով՝ վերոյիշեալ Մուհասըլ էֆէնտին՝ անկարգութի ընելու դիտաւորութիւն թէպէտ չէ ըրած, բայց աղէկ գործքերու ալ յաջողակ չէ գտնուած։

Եւ մէտրէփօլիտն ալ սոյն բանին հակառակ մահզարներ խըրկելը, և Նաֆիզ փաշային կողմնականներուն ըրած խօսքերուն խաբվիլը, և ատոնց ասանց նման անյարմար գործքերը, և իր ազգը անիկայ չուզելը յայտնի եղած է։

---

Մեծի տէրութեանը ըճալներէն և Սատրազամին եղբայրը՝ Տահիր սելամ պէյ էֆէնտին կատարեալ խոհեմութի ունենալուն համար՝ բարեխնամ Ինքնակալին հրամանաւը բաւական ապրուստ կապվելով, մէճլիսի ահքեամի ատլիյէին ազա եղաւ։

Միտիլլի ատասին՝ որ Ճերմակ ծովի ատաներուն գլխաւորներէն է, մուհասըլ գտնըվող ըիքէապի խաֆուճի պաշի Սալիհ պէյ էֆէնտին՝ մեծի տէրութեը հաւատարիմ ծառաներէն ըլլալով, թանզիմաթի խայրըյէին վերաբերեալ գործքերը ՚ի գործ դնելու ջանացողութիւն և ուղղութիւն ըրեր է։

Ասոր ամ կերպով գթած Թագաւորին պարգեւացը արժանաւոր անձ մը ըլլալով, Արքայէն երկրորդ աստիճանի նշանը շնորհվեցաւ։

Գազի պարտատէր գտնըվող անձինք թէ այր և թէ կին՝ որ իրենց պարտքը հատուցանելու կարողութի չունենալով՝ բանտարգեալ եղած էին, բազմագութ Ինքնակալին զաւակ ծնած ժամանակը՝ այնպիսի պարտատէր աղքատներուն իրենց պարտքը հատուցանելու մօտ առատ պարգեւ շնորհվելուն Արքայն հրաման ըրաւ։

Եւ Թէրսանէի զընտանը, և արքունի և սէրասքէրին դըռներուն գօմրուխները, և Թիճարէթխանէի հափըսխանէները, ծանր յանցանք ունենալով՝ մշտնջենաւոր և կամ ժամանակաւոր բանտարգեալ եղողներէն ՚ի զատ, քիչ և թեթեւ յանցաւորները թողտալու համար՝ մեծազօր Արքայն հրաման ըրաւ։

Այս բարձրեալն ած՝ առատագութ և բարերար Ինքնակալին մերոյ կենացը երկարութի պարգեւեսցէ։ Եւ այս առատօրէն ըրած ողորմութիւնը՝ իր հովանաւորութեան ներքեւը եղած բոլոր աղքատներուն վրայ ունեցած գթութեան պտուղը ըլլալուն համար՝ ամենուն կողմանէ ալ շնորհակալութեամբ մեծաւ բարեմաղթութիւն եղաւ։

Դիվանի խալէմին քեաթիպներէն՝ մեռնող սիլէհտար Ալի փաշային որդին՝ Ապտիւլըահման պէյը շարունակ խալէմը երթալով՝ պարգեւաց արժանաւոր գտնըվելուն համար, արքայական հրամանաւ խօճայութեան աստիճանը՝ և հարկ եղած վկայականը տրուեցաւ։

---

Ֆիլէմէնկլի տէրութեը հետ Օսմանեան մեծի տէրութեը կողմանէ այս անգամ կապված թիճարէթի դաշնադրութեան թաստիգնամէն արքայանիստ քաղաքը եկեր է։

Եւ Ֆիլէմէնկլի տէրութեը գործակալին հետ մէկ տեղ ներկայ գտնըվելու անձինքը՝ խարիճիյէի նազըր Րէշիտ փաշային եալըն գնալով, Արքային կողմանէ ալ փոխարէն հարկ եղած թաստիգնամէն՝ նոյն գործակալին տրուեցաւ։

Ռուսի տէրութե դեսպանը Մօսեօ փօթէնիֆին մասամն տկարութի ունենալուն համար՝ շրջագայելով առողջութի ըստանալու դիտաւորութեամբ Իտալիայի և Վիէննայի կողմը եղած բաղանիքները երթալու՝ վերոյիշեալ տէրութեը կողմանէ հրաման առած ըլլալը, և Պուքրէշ գտնըված Ռուսի տէրութեան գօնսօլօս Մօսեօ Թիթօֆը՝ յիշեալ դեսպանին տեղը վէքիլ դըրվելու մօք՝ արքայանիստ քաղաքը գալը, նոյն դեսպանին կողմանէ խարիճիյէ նազըրին ազդարարուի եղեր է։

Եւ մեծի տէրութեը ՚ի վաղուց հետէ սովորութիւն է՝ դեսպաններուն գնացած ժամանակը Արքային դէմը ներկայանալ. ուստի այժմէս յիշեալ դեսպանը և խարիճիյէի նազըրը և ուրիշ ներկայ գտնըվելու անձինքը Արքային դէմը ներկայանալով, իր կողմանէ՝ նոյն դեսպանին յարգանք ցոյց տրուեցաւ։